# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

## Ուսանողական վարկ (Բանկի ռեսուրսներով)

*14.12.2021թ.*

| | | |
|---|---|---|
| **1** | **Վարկի հիմնական չափանիշներ** | |
| 1.1 | Վարկի նպատակային նշանակություն | Վարկը տրամադրվում է հետևյալ նպատակների համար.<br>1. լոկալ և միջազգային (արտասահմանյան) ուսումնական հաստատություններում (ՈՒՀ), արտասահմանյան ՈՒՀ-ների մասնաճյուղերում և այլն ուսման վճարման համար,<br>2. տարբեր ուսման կուրսերի վճարմամ համար, ընդ որում՝ տվյալ նպատակային նշանակությամբ տրամադրված գործող վարկերի քանակը չի կարող լինել 3-ից ավել,<br>3. ՈՒՀ-ներում (լոկալ և միջազգային (արտասահմանյան) ՈՒՀ, արտասահմանյան ՈՒՀ-ների մասնաճյուղերում և այլն) աշակերտ/ուսանող հանդիսացող, ինչպես նաև տարբեր վճարովի կուրսերում և վճարովի դպրոցներում սովորող երեխաների ուսման վճարման համար: |
| 1.2 | Նպատակային խումբ | ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք |
| 1.3 | Վարկի ձևակերպման վայր | Բանկի ցանկացած մասնաճյուղ |
| 1.4 | Վարկի արժույթ | ՀՀ դրամ |
| 1.5 | Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք[1] | Մինչև 2 տարի (ներառյալ) վարկի ժամկետի դեպքում՝ 16%<br>2-ից մինչև 5 տարի (ներառյալ) վարկի ժամկետի դեպքում՝ 16.5% |
| 1.6 | Վարկային հաշվի հավելյալ սպասարկմամբ վարկի ստացման ընտրության դեպքում տոկոսադրույքից զեղչ | **Տարեկան անվանական տոկոսադրույք հանած 1%** |
| 1.7 | Տարեկան փաստացի տոկոսադրույք | 16.61%-24% |
| 1.8 | LTV (Վարկ/Գրավ) առավելագույն հարաբերակցություն | - |
| 1.9 | Վարկի առավելագույն գումար | Ուսման վարձի 100%, սակայն ոչ ավել, քան 5 մլն. ՀՀ դրամ |
| 1.10 | Վարկի նվազագույն գումար | 50,000 ՀՀ դրամ |
| 1.11 | Վարկի գումարի սահմանափակում | Վարկի գումարը չի կարող գերազանցել ՈՒՀ-ից ներկայացվող տեղեկանքում[2] ուսման վարձի արժեքը: Վարկը տրամադրվում է միանվագ ուսման ցանկացած ժամանակահատվածի համար ուսման վարձը վճարելու նպատակով՝ կախված ՈՒՀ-ի կողմից վճարման պահանջից (ուսումնական տարվա, սեմեստրի, ուսման դասընթացի համար և այլն): Չի վարկավորվում ուսման վարձի այն գումարը, որը կուտակվել է նախորդ ուսման տարիներից (ուսման պարտք): |
| 1.12 | Վարկի առավելագույն ժամկետ | մինչև 5 տարի (ներառյալ), բայց ոչ ավել, քան ուսման ժամկետը[3] +3 տարի |
| 1.13 | Վարկի նվազագույն ժամկետ | 3 ամիս |
| 1.14 | Վարկի մարման եղանակ | 1. Անուիտետային մարումներ, ընդ որում ուսման ընթացքում (առավելագույնը 4 տարի) մարվում են միայն տոկոսները, իսկ ուսման ավարտից հետո հավասարաչափ մարվում են վարկի հիմնական գումարը և տոկոսները:<br>2. Անուիտետային մարումներ (ամսական հավասարաչափ մարվում են վարկի տոկոս + հիմնական պարտք) |
| 1.15 | Վարկի տրամադրման եղանակ | Վարկի գումարի անկանխիկ փոխանցում անմիջապես ՈՒՀ-ից ներկայացվող տեղեկանքում նշված ՈՒՀ-ի բանկային հաշվին: |
| 1.16 | Վարկի վաղաժամկետ մարման արգելք | Վաղաժամկետ մարման մասով սահմանափակումներ չկան:<br>Վարկառուն/ները իրավունք ունի/են՝<br>- առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծել վարկային պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ): Այդ դեպքում Վարկառուն/ները պարտավոր է/են վարկի փաստացի օգտագործված օրերի համար վճարել վարկային պայմանագրով նշված փաստացի տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարները:<br>**- վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներից շուտ մարել վարկը: Տվյալ դեպքում Վարկառուի/ների նկատմամբ տուժանք չի կիրառվում, ընդ որում՝**<br>**• ենթակա են նվազեցման վարկի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսների, միջնորդավճարների և սպասարկման վճարների ծախսը,**<br>**• ենթակա չեն նվազեցման սույն պայմանագրի պայմանների չկատարմա կամ ոչ պատշաճ կատարման համար վճարված տուժանքները, վարկի մարման և/կամ տոկոսների վճարման նպատակով կատարված փոխանցումների համար, ինչպես նաև այդ նպատակով բացված հաշիվների սպասարկման համար վճարված գումարները, նոտարական վավերացման, պետական գրանցման (նշված ծառայությունների առկայության դեպքում) դիմաց կատարված վճարները, հավելյալ՝սույն վարկի հետ կապ չունեցող, վարկառուի ցանկությամբ ընտրված ապահովագրական ծառայությունների դիմաց կատարված ապահովագրավճարները:**<br>**Վարկի ամբողջական վաղաժամկետ մարման դեպքում ենթակա են վերադարձման նախապես վճարված, սակայն փաստացի չօգտագործված ամիսների/օրերի համար կատարված վճարները:** |
| 1.17 | Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում կիրառվող տույժ | **Վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներում վարկի մայր գումարը և/կամ տոկոսագումարները չվճարելու դեպքում Բանկն իրավունք ունի դադարեցնել վարկի ժամկետանց մասի նկատմամբ տոկոսագումաների հաշվարկը՝ պահպանելով չժամկետանցված մասի նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը, և ժամկետանց վարկի և/կամ ժամկետանց տոկոսագումարների նկատմամբ (մինչև դրանց փաստացի վճարումը) կիրառել տույժ՝ օրական 0.13% չափով, սակայն ոչ ավել, քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված տուժանքի առավելագույն չափը, իսկ նշված առավելագույն չափին հասնելուց հետո Բանկն իրավունք ունի վերականգնել վարկի մնացորդի (ներառյալ ժամկետանց մասի) նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը:** |
| 1.18 | Պարտավորությունների չկատարման դեպքում հնարավոր բացասական հետևանքներ | **<u>ԶԳՈՒՇԱՑՈՒՄ</u>՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ՄԱՐՎԵԼ ՁԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:<br><u>ԶԳՈՒՇԱՑՈՒՄ</u>՝ ՁԵՐ ԳՈՒՅՔԸ (ՏՈՒՆԸ, ՄԵՔԵՆԱՆ ԿԱՄ ԱՅԼ) ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:<br><u>ԶԳՈՒՇԱՑՈՒՄ</u>՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:** |
| 1.19 | Վարկի որոշման կայացման և հաճախորդին տեղեկացման առավելագույն ժամկետ | 2 (երկու) աշխատանքային օր |
| 1.20 | Վարկի տրամադրման և ՈՒՀ-ի բանկային հաշվին փոխանցման ժամկետ | Վարկային պայմանագիրը կնքելուց հետո 1 (մեկ) աշխատանքայի օրվա ընթացքում |
| 1.21 | Ապահովություն | Եկամտի ստացման իրավունք պայմանագրային հիմունքներով |
| **2** | **Բանկի միջնորդավճարներ** | |
| 2.1 | Հայտի դիտարկման միանվագ միջնորդավճար | 1,000 AMD |
| 2.2 | Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար | 1% վարկի գումարից |
| 2.3 | Վարկային հաշվի սպասարկման ամսական միջնորդավճար (պարտադիր) | **Նախատեսված չէ** |
| 2.4 | Վարկային հաշվի հավելյալ[4] սպասարկման ամսական միջնորդավճար (կամավոր) | Վերոնշյալ միջնորդավճարին գումարվում է նաև (կախված վարկի գումարից)՝<br>- մինչև 300,000 ՀՀ դրամ (ներառյալ) վարկի դեպքում՝ տրամադրված վարկի գումարի 0.32%,<br>- 300,000 ՀՀ դրամ վարկի գումարի գերազանցման դեպքում՝ տրամադրված վարկի գումարի 0.22% |
| **3** | **Վարկառուին/Համավարկառուին ներկայացվող պահանջներ** | |
| 3.1 | Կարգավիճակ | 1. ՀՀ ռեզիդենտ<br>2. ԼՂՀ-ում հաշվառված, սակայն ՀՀ-ում եկամուտ ստացող քաղաքացիներ |
| 3.2 | Համավարկառու | Որպես Համավարկառու կարող է հանդես գալ Վարկառուի հետ ազգակցական կապի մեջ գտնվող ֆիզիկական անձ (ամուսին, կին, մայր, հայր, չափահաս երեխաներ, եղբայր, քույր, քույրերի/եղբայրների ամուսին/կին, ամուսնու/կնոջ քույրեր/եղբայրներ, ամուսնու/կնոջ ծնողներ, հորաքույրներ/մորաքույրներ, հորեղբայրներ/մորեղբայրներ, տատիկներ, պապիկներ): Համավարկառուների քանակը չպետք է գերազանցի 2: |
| 3.3 | Վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ | Բանկի ներքին իրավական փաստաթղթերի համաձայն |
| 3.4 | Ընդհանուր աշխատանքային փորձ | Վերջին աշխատանքային վայրում ոչ պակաս, քան 4 ամիս անընդհատ աշխատանքային փորձ:<br>Աշխատանքային ստաժը չի պահանջվում միայն «1000+» հիմնադրամի հատուցման գումարներից ստացած եկամուտների հիման վրա հայտերի դեպքում: |
| 3.5 | Վարկառուի տարիք | 18 տարեկանից (համավարկառուի համար՝ 23 տարեկան), և վարկի մարման պահին չպետք է գերազանցի վարկառուի թոշակի անցնելու տարիքը |
| **4** | **Լրացուցիչ պայմաններ** | |
| 4.1 | **Վարկային ծառայությունից օգտվելու համար հաճախորդը Բանկում պետք է ունենա բանկային հաշիվ:** | |
| 4.2 | Ընթացիկ հաշիվների | Համաձայն Բանկի սակագների, որոնց կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքում՝ https://www.vtb.am/am/accounts-and-payments հասցեով: |

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար զանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

| | | |
|---|---|---|
| | բացում/վարում/կանխիկացում | |
| 4.3 | Վարկային հաշվի գծով քաղվածքի/տեղեկանքի տրամադրում | "ՎՏԲ-Հայաստան Բանկ" ՓԲԸ գործող "Բանկային հաշիվների բացման և սպասարկման պայմանների և սակագների" համաձայն, որոնց կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքում` https://www.vtb.am/am/secondary/vypiski հասցեով: |
| 4.4 | **[1] Հաճախորդի կողմից Բանկում աշխատավարձ ստանալու դեպքում գործում են զեղչեր: Բանկում աշխատավարձ չստանալու դեպքում նշված զեղչը կարող է չեղարկվել, որի արդյունքում վարկի անվանական տոկոսադրույքը կբարձրանա տվյալ զեղչի չափով:** | |
| 4.5 | [2] ՀՀ-ի տարածքում գործող ՈւՀ-ից կամ այլ կազմակերպությունից (միջնորդող)աշակերտի/ուսանողի (բակալավրիատի/մագիստրատուրայի/ասպիրանտուրայի/օրդինատուրայի) ներկայացված ուսման փաստի հաստատմամբ տեղեկանքը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը`<br>1. ՈւՀ-ի անվանում,<br>2. ուսուցանման կուրսը և ՈւՀ-ում ֆակուլտետի/դասընթացի անվանում,<br>3. ուսման տարեկան վարձի չափը (տվյալ ուսման տարվա մնացորդի գումար) (եթե սահմանված է վճարման այլ ժամանակահատված, ապա նշվում է վճարման հստակ ժամկետ և գումար),<br>4. ուսանողի/աշակերտի ուսման վարձի զեղչի (առկայության դեպքում) չափը,<br>5. ուսանողի/աշակերտի ուսման ավարտի ամիս և տարեթիվ,<br>6. ՈւՀ-ի բանկային հաշվի համար, որին պետք է փոխանցվի վարկի գումարը:<br>**! Տեղեկանքի վաղեմության ժամկետը չպետք է գերազանցի 7 (յոթ) աշխատանքային օրը տրամադրման պահից: Այն դեպքում, եթե ՈւՀ-ի կողմից ամբողջ տեղեկատվությունը մեկ տեղեկանքով հնարավոր չէ տրամադրել, տեղեկատվությունը կարող է տրամադրվել մի քանի տեղեկանքով:** | |
| 4.6 | [3] Ուսման ժամկետ է համարվում մնացած ուսման ժամկետը: | |
| 4.7 | [4] Վարկային հաշվի հավելյալ սպասարկումը իր մեջ ներառում է հետևյալ ծառայությունները.<br>- հատուկ ընդհանրացված տեղեկատվական ձևաչափով հաճախորդի վարկային պատմության վերաբերյալ (ԱՔՌԱ հարցման պատասխանի հիման վրա ձևավորված) տեղեկատվության տրամադրում,<br>- դժբախտ պատահարներից ապահովագրություն` վարկի մնացորդի չափով Վարկային հաշվի հավելյալ սպասարկման ժամանակահատվածում:<br>Վարկային հաշվի հավելյալ սպասարկման ծառայությունից հրաժարվելու դեպքում տոկոսադրույքից կատարված համապատասխան զեղչը կչեղարկվի և վարկի տարեկան տոկոսադրույքը կբարձրացվի տվյալ զեղչի չափով: | |

| Բանկի ռեսուրսով ուսանողական վարկի տրամադրման համար Վարկառուից/Համավարկառուից պահանջվող փաստաթղթերի ցանկ | |
|---|---|
| 1 | Պատշաճ կերպով լրացված Դիմում-հայտ |
| 2 | Անձը հաստատող փաստաթուղթ - ՀՀ քաղաքացիների դեպքում` անձնագիր կամ նույնականացման քարտ, ոչ ՀՀ քաղաքացիների դեպքում` անձը հաստատող փաստաթուղթ:<br>ՀՀ քաղաքացու դեպքում` հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական քարտ) կամ նույնականացման քարտ*, բացակայության դեպքում` հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք<br>Եթե Վարկառուն/Համավարկառուն ամուսնացած է, ապա նաև կնոջ/ամուսնու փաստաթղթեր:<br>* Նույնականացման քարտի ներկայացման դեպքում պարտադիր է հանրային ծառայությունների համարանիշի առկայությունը նույնականացման քարտի վրա: |
| 3 | Ուսումնական հաստատությունից տեղեկանք |
| 4 | Եկամուտների մասին տեղեկանք պահանջվում է Վարկառուից և/կամ Երաշխավորից և/կամ Համավարկառուից միայն այն դեպքում, եթե վարկային հայտի շրջանակներում վերլուծվում են Վարկառուի և/կամ Համավարկառուի եկամուտները (վճարունակությունը) (բացառությամբ այն դեպքերի, երբ եկամուտը ստացվում է "ՎՏԲ-Հայաստան Բանկ" ՓԲԸ-ի հաշիվներով): |
| 5 | **Անհրաժեշտության դեպքում Բանկի կողմից կարող են պահանջվել այլ փաստաթղթեր:** |

**Ուշադրություն`**

**Հաճախորդի վարկային հայտը մերժվում է, եթե`**

- **Հաճախորդի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր,**
- **Հաճախորդը չի բավարարում Բանկի նվազագույն պայմաններին,**
- **«ԱՔՌԱ» վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը (առկայության դեպքում նաև Համավարկառուները/Երաշխավորները) ունի բացասական վարկային պատմություն,**
- **Վարկունակության գնահատման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը վարկունակ չէ,**
- **Վարկավորման գործընթացի արդյունքում հաճախորդի վերաբերյալ հայտնի է դարձել այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից ներկայացված տեղեկության հավաստիությունը:**

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ` ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ԲԱՆԿԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ` https://www.vtb.am/am/information/raschet-fakticheskoy-stavki ՀԱՍՑԵՈՎ:**

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ` ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ` ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:**

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ` ԲԱՑԱՍԱԿԱՆ ՎԱՐԱԿՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ:**

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ` ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ԲԱՆԿԸ ՁԵԶ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵԶ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:**

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ` "ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ" ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է` https://www.fininfo.am/compare-student-loan**

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ` Բանկը` "Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին" ՀՀ օրենքով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով, կարող է Հաճախորդից "Ճանաչիր քո հաճախորդին" ("Know your customer") սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին:**

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ` Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր` ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:**

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար զանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք` www.vtb.am հասցեով: